

Մարգարեա Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առթիվ

07.03.2012

Միրելի կանայք,

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ գարնանային այս հիասքանչ օրվա՝ Կանանց տոնի առթիվ:

Այս տոնական օրը ևս մեկ հրաշալի առիթ է մեր երախտիքի և գնահատանքի խոսքերը հղելու Ձեզ՝ Ձեր նվիրումի, հոգատարության, ազգապահպան ու անկոտրուն ոգու և ոգեշնչող ներկայության համար:

Դարեր ի վեր Հայ կնոջ առերևույթ փխրուն ու խոցելի կերպարը միշտ գուգորդվել է դժվարությունները հաղթահարելու անսպառ ուժով ու եռանդով:

Նա չի ընկրկել անգամ պատմության ամենաճանր պահերին՝ յուրօրինակ ապավեն դառնալով, հույս ու հավատ ներշնչելով մեր ժողովրդին: Չի դադարել կրթել ու դաստիարակել, պաշտպանել ու բժշկել, ստեղծել ու ստեղծագործել՝ այդպիսով անսասան պահելով թե ընտանիքի, թե պետության հիմքերը:

Այսօր արդեն ընդլայնվել է Հայ կանանց ներգրավվածությունը հանրային կյանքի բոլոր ոլորտներում, ինչը գովելի է և միանշանակ նպաստելու է մեր պետականության կայացմանը, ամրապնդմանն ու զարգացմանը:

Հայաստան աշխարհի թանկագին մայրեր, տիկնայք, քույրեր և դուստրեր,

Վերստին շնորհավորում եմ Ձեզ Մարտի 8-ի առթիվ և ցանկանում, որ ապրեք առողջ, երջանիկ, Ձեր իսկ երազած իրականության մեջ՝ շրջապատված անհուն սիրով ու հոգատարությամբ:

Բարին ընդ Ձեզ:

*ՀՀ Արմավիրի մարգարեա՝
Աշոտ Ղահրամանյան*